

Բովանդակություն

Ներածություն և Անվտանգություն	2
Անվտանգության ծանուցման մակարդակներ	2
Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ	2
Տեղափոխում և պահուստավորում	5
Փականը գործածելու և փաթեթավորումից հանելու ուղեցույց	5
Պահուստավորման, հեռացման և վերադարձի պահանջներ	5
Ապրանքի նկարագրություն	6
Փականի իրանից մինչև շարժաբերը տեղադրված մեխանիզմների նույնականացում	6
Փակոցի նկարագրություն	6
Փականի դիաֆրագմայի նույնականացում	6
Տեղադրում	8
Փականի և վերնամասային սարքավորումների տեղադրում	8
Փակոցի ամրակումների ձգում	8
Ամրակցիչի պտտող մոմենտի տվյալների աղյուսակ փականի իրանից մինչև շարժաբեր մեխանիզմների համար	9
Սահմանել վերհանման սահմանափակիչ	10
Աշխատանքային գործառույթներ	12
Փականի իրանից մինչև շարժաբերը տեղադրված մեխանիզմների շահագործում	12
Բացման կարգավորվող սահմանափակիչի շահագործում	12
Տեխսպասարկում	14
Նախագուշական ցուցումներ	14
Ստուգում	14
Պահանջներ քայուղման համար	14
Փականի կազմատում	15
Փականի դիաֆրագմայի փոխարինում	15
Դիաֆրագմայի տեսակի փոփոխում	17
Օ-աձև օղակների փոխարինում	17
Մասերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր	20
963 PAS պլաստիկ փակոց	20

Ներածություն և Անվտանգություն

Անվտանգության ծանուցման մակարդակներ

Սահմանումներ

Անվտանգության ծանուցման մակարդակ	Ցուցում
 ՎՏԱՆԳԱՎՈՐ Է.	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կհանգեցնի մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կարող է հանգեցնել մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կարող է պատճառել թեթևից միջին աստիճանի մարմնական վնասվածք
 Էլեկտրահարման վտանգ.	Էլեկտրահարման վտանգի հավանականություն, եթե անվտանգության ցուցումները և հրահանգները պատշաճ կերպով պահպանված չեն
ԾԱՆՈՒԹՅՈՒՄ.	<ul style="list-style-type: none"> Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կարող է առաջացնել անցանկալի հետևանք կամ վիճակ Վիճակ, որը կապված է մարմնական վնասվածքի հետ

Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ

Ընդհանուր նախազգուշական ցուցումներ

Այս ապրանքը նախազգուշակալի և արտադրվել է լավագույն նյութերի օգտագործմամբ և բարձր վարպետությամբ և համապատասխանում է ոլորտում գործող բոլոր չափանիշներին: Այս ապրանքը պետք է օգտագործել միայն ITT ընկերության ցուցումներին համաձայն:



ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

- Փականի սխալ շահագործումը կարող է պատճառել մարմնական վնասվածք կամ վնաս հասցնել գույքին: Ընտրե՛ք ճիշտ նյութերից պատրաստված փականներ և բաղադրիչների և համոզվե՛ք, որ դրանք համապատասխանում են Ձեր աշխատանքային պահանջներին: Այս ապրանքի ոչ ճիշտ կիրառում է հանդիսանում հետևյալը՝ առանց սահմանափակման.
 - Ճնշման կամ ջերմաստիճանի ցուցանիշների գերազանցում
 - Ապրանքի տեխսպասարկման իրականացում առանց համապատասխան պահանջները բավարարելու
 - Ապրանքի օգտագործում այնպիսի նյութերի համար, որոնք անհամատեղելի են նրա կառուցվածքի նյութերի հետ
 - Վերջնական սպառողը պետք է ապահովի փականի ճիշտ պահպանումը կամ ձեռնարկի միջոցառումներ վնասակար նյութերից պաշտպանելու համար, որպեսզի պաշտպանի իր աշխատակիցներին և շրջակա միջավայրը փականի թափոնումից:
- Եթե ապրանքը արտահոսքի որևէ նշան է ցույց տալիս, այն մի՛շտ շահագործե՛ք: Մեկուսացրե՛ք ապրանքը և վերանորոգե՛ք այն կամ փոխարինե՛ք տրոփ, ինչպես ներկայացված է սույն ուղեցույցում:

Որակավորումներ և փորձարկում

Փականի հավաքման, շահագործման, ստուգման և տեխսպասարկման համար պատասխանատու անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում: Շահագործող ընկերությունը պետք է կատարի հետևյալ առաջադրանքները.

- Սահմանել այս սարքավորման հետ աշխատող անձնակազմի բոլոր անդամների պատասխանատվություններն ու կարողությունները:
- Իրականացնել հրահանգավորում և ուսուցում:
- Ապահովել, որ անձնակազմի բոլոր անդամները լիարժեքորեն հասկանան շահագործման ցուցումների բովանդակությունը:

Հրահանգավորումը և ուսուցումը շահագործող կազմակերպության պատվերով կարող է իրականացնել ինչպես ITT ընկերությունը, այնպես էլ՝ փականը վաճառող ընկերությունը:

Սույն կանոնները չպահպանելու հետ կապված վտանգներ

Անվտանգության բոլոր նախազգուշական ցուցումները չպահպանելու դեպքում կարող է պատահել հետևյալը.

- Մահ կամ լուրջ վնասվածք էլեկտրական, մեխանիկական և քիմիական ազդեցության հետևանքով
- Վնաս շրջակա միջավայրին վնասակար նյութերի արտահոսքի հետևանքով
- Ապրանքի վնասում
- Գույքի վնասում
- Չրկում վնասների դիմաց բոլոր տեսակի բողոքներ ներկայացնելու իրավունքից

Շահագործման անվտանգության նախազգուշական ցուցումներ

Այս ապրանքը շահագործելիս՝ պետք է ի նկատի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Մի՛ թողեք ապրանքի տաք կամ սառը բաղադրիչները առանց ուշադրության, եթե դրանք կարող են վտանգի աղբյուր լինել:
- Մի՛ հեռացրեք շարժական մասերի կոնտակտային պաշտպանիչ միջադիրը, երբ ապրանքը շահագործման մեջ է: Երբեք մի՛ շահագործեք ապրանքը, եթե կոնտակտային միջադիրը տեղադրված չէ:
- Ապրանքից այլ իրեր մի՛ կախեք: Բոլոր տեսակի հարակից պարագաները պետք է ամուր կամ հիմնական ամրակցված լինեն:
- Մի՛ օգտագործեք ապրանքը որպես աստիճան կամ ձեռքի բռնակ:
- Մի՛ ներկեք այս ապրանքի հետ կապված նույնականացման պիտակը, նախազգուշական նշանները, ցուցումները կամ այլ նշանները:

Տեխսպասարկման անվտանգության նախազգուշական ցուցումներ

Այս ապրանքի տեխսպասարկումն իրականացնելիս՝ պետք է ի նկատի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Դուք պետք է ապրանքը մաքրեք աղտոտումներից, եթե այն ենթարկվի վնասակար, օրինակ քիմիական քայքայիչ նյութերի ազդեցությանը:

Չթույլատրված մասերի օգտագործում

Ապրանքի վերակազմավորումը կամ ձևափոխումը թույլատրվում է միայն ITT ընկերության հետ խորհրդակցելուց հետո: ITT ընկերության կողմից թույլատրված գործարանային պահեստամասերը և հարակից մասերը ապահովում են անվտանգություն: ITT ընկերության ոչ գործարանային մասերի օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից: ITT ընկերության մասերը չպետք է օգտագործել ITT ընկերության կողմից չառաքված մասերի հետ, քանի որ նմանատիպ ոչ ճիշտ օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից:

Շահագործում անթույլատրելի եղանակով

Այս ապրանքի աշխատանքային հուսալիությունը երաշխավորվում է միայն այն դեպքում, եթե այն օգտագործվում է ըստ նշանակության: Նույնականացման պիտակի վրա և տվյալների մասնագրում նշված աշխատանքային սահմանափակումները չի կարելի

գերազանցել ոչ մի հանգամանքում: Եթե նույնականացման պիտակը բացակայում է կամ մաշվել է, կապվեք ITT ընկերության հետ՝ հատուկ ցուցումներ ստանալու համար: Մի՛ օգտագործեք «խողովակային ձողեր» ձեռքով շահագործվող փականները շահագործելու համար: Դա կարող է վնասել փականը կամ վնաս պատճառել անձնակազմին:

Տեղափոխում և պահուստավորում

Փականը գործածելու և փաթեթավորումից հանելու ուղեցույց



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Այս ապրանքը գործածելիս՝ մշտապես հետևեք պատահարները կանխարգելող գործող ստանդարտներին և կանոնակարգերին:

Գործածման ցուցումներ

Ապրանքը գործածելիս՝ հետևեք սույն ցուցումներին վնասներից խուսափելու համար.

- Այս ապրանքի հետ վարվեք զգուշորեն:
- Նախքան տեղադրելը պահպանեք ապրանքի պաշտպանիչ թասակները և ծածկերը:

Փաթեթավորումը հեռացնելու ցուցումներ

Ապրանքի փաթեթավորումը հեռացնելիս՝ հետևեք սույն ցուցումներին.

1. Ստուգեք, որպեսզի առաքման ժամանակ ապրանքը զերծ լինի վնասվածքներից, կամ բացակայող մասեր չլինեն:
2. Ապրանքի ստացականի և բեռնագրի վրա շնեք բոլոր վնասվածքները և բացակայող մասերը:
3. Մի՛ անցկացրեք էլեկտրական հաղորդալարեր կամ մի՛ բարձրացրեք դրանցով: Դա կարող է խախտել հոսանքատար լարերի անջատիչների կարգաբերումը:

Պահուստավորման, հեռացման և վերադարձի պահանջներ

Պահուստավորում

Ջեռացում

Այս ապրանքի և հարակից մասերի հեռացումը պետք է իրականացվի դաշնային, նահանգային և տեղական կանոնակարգերի համաձայն:

Վերադարձ

Նախքան ապրանքի վերադարձը ITT ընկերությանը համոզվեք, որ պահպանված են հետևյալ պահանջները.

- Ապրանքի վերադարձի հետ կապված հատուկ ցուցումների համար կապվեք ITT ընկերության հետ:
- Փականը մաքրեք բոլոր տեսակի վնասակար նյութերից:
- Բոլոր տեսակի հեղուկների համար, որոնք կարող են մնալ փականի վրա, լրացրեք Նյութի անվտանգության ձևաթերթը կամ Գործընթացների ձևաթերթը:
- Գործարանից ստացեք վերադարձի թույլտվություն:

Ապրանքի նկարագրություն

Փականի իրանից մինչև շարժաբերը տեղադրված մեխանիզմների նույնականացում

Մոդելի համար

Ծածկագիր	Նկարագրություն
903	Թուջե փակոց դուրսահանովի առանցքածողով և վերհանման սահմանափակիչով
903S	Թուջե հերմետիկ փակոց դուրսահանովի առանցքածողով և վերհանման սահմանափակիչով
913	Չժանգոտվող պողպատից փակոց դուրսահանովի առանցքածողով և վերհանման սահմանափակիչով
913S	Չժանգոտվող պողպատից հերմետիկ փակոց դուրսահանովի առանցքածողով և վերհանման սահմանափակիչով
963	PAS պլաստիկից փակոց դուրսահանովի առանցքածողով և վերհանման սահմանափակիչով
963S	PAS պլաստիկից հերմետիկ փակոց դուրսահանովի առանցքածողով և վերհանման սահմանափակիչով


Փակոցի նկարագրություն

Ոչ հերմետիկ փակոց

Ոչ հերմետիկ փակոցն ունի դրենաժային անցք, որը ցույց է տալիս դիաֆրագմայի խափանումը՝ թույլ տալով փակոցում կուտակված հեղուկի հեռացումը անցքի միջով:

Հերմետիկ փակոց

Հերմետիկ փակոցում օգտագործվում է հատուկ V-աձև խցափակիչ, որը թույլ է տալիս հայտնաբերել արտահոսքը:



V-notch vent plug
(Sealed bonnet only)

Նկար 1. Դրենաժային անցք և V-աձև խցափակիչ

Փականի դիաֆրագմայի նույնականացում

Դիաֆրագմայի պիտակի ծածկագիր

Դիաֆրագմայի համար օգտագործված բոլոր նյութերին և դրանց ֆիզիկական հատկություններին կարելի է ծանոթանալ ըստ խմբաբանակի՝ դիաֆրագմայի պիտակին մամլված մշտական ծածկագրի միջոցով: Մամլվածքի ամսաթիվը, դիաֆրագմայի կարգը և չափսը թույլ են տալիս հետևել խմբաբանակի համար գործարանային գրանցված տվյալներին:



1. Ամսաթվի ծածկագիր
2. Մատակարարի ծածկագիր

Նկար 2. Դիաֆրագմայի առաջամաս ճկուն պոլիմերից



1. Փականի չափս
2. Դիաֆրագմայի կարգ

Նկար 3. Դիաֆրագմայի հետևամաս ճկուն պոլիմերից



1. Նյութի ծածկագիր
2. Ամսաթվի ծածկագիր

Նկար 4. Դիաֆրագմա պոլիտետրաֆլյորէթիլէնից

Տեղադրում

Փականի և վերնամասային սարքավորումների տեղադրում

ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Կափույրի չափսը և կոնֆիգուրացիան կարող է սահմանափակել իրական աշխատանքային ճնշումը: Ծնշման սահմանափակումների վերաբերյալ տեղեկացե՛ք Pure-Flow կատալոգից: Վակուումում աշխատանքի վերաբերյալ տեղեկացե՛ք գործարանից կամ ինժեներական կատալոգից:

1. Եթե Դուք ունեք եռակցված փական, ապա հաշվի առե՛ք հետևյալը.

Եթե Դուք եռակցում եք ...	ապա ...
ձեռքով,	հանե՛ք վերնամասի սարքավորումները: հանե՛ք դիաֆրագման:
Ըստ սանդղակի 10 կամ ավելի ծանր խողովակով խողովակաշարում	հանե՛ք վերնամասի սարքավորումները: հանե՛ք դիաֆրագման:
Ըստ սանդղակի 5 կամ ավելի թեթև խողովակով խողովակաշարում	Կարող եք եռակցել ավտոմատ սարքավորումը: Նախքան եռակցելը. 1. հանե՛ք վերնամասի սարքավորումները (ըստ նախընտրության): 2. Տեղադրված թողնելու դեպքում փականի դիրքն ուղղե՛ք բաց դիրքի վրա: 3. Լավ մաքրե՛ք փականը իներտ գազով:

2. Տեղադրե՛ք փականը:
Տեղադրե՛ք փականի իրանի վրա արտատպված «#» նշանները (ծուլված) կամ փոքր մեքենայական կետերը (դրոշմված) ժամը 12:00-ի ուղղությամբ՝ հեղուկահեռացման համար օպտիմալ անկյուն ստանալու համար:



3. Նախքան ճնշում տալը (փականը թեթևակի բաց վիճակում), ձգե՛ք փակոցի ամրակումները:
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Փակոցի ամրակումների ձգում](#) (Էջ 8):
4. Փականը շրջանառե՛ք երկուսից երեք անգամ՝ համոզվելու համար, որ այն սահուն աշխատում է:
5. Տեղադրե՛ք վերհանման սահմանափակիչը:
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Սահմանել վերհանման սահմանափակիչ](#) (Էջ 10):

Փակոցի ամրակումների ձգում



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Մի՛ ձգեք ամրակիչներն այն ժամանակ, երբ համակարգը գտնվում է ճնշման կամ բարձր ջերմաստիճանների տակ (38°C-ից | 100°F-ից բարձր):

1. Հանե՛ք համակարգի ճնշումը:
2. Դիաֆրագման դիրքավորե՛ք այնպես, որ փականը թեթևակի բաց մնա:

Շարժաբերով փականների համար հնարավոր է անհրաժեշտ լինի օգտագործել օդի ճնշում փականը գործի դնելու համար:

3. Ձգե՛ք փակոցի ամրակումները խաչաձև ուղղություններով:
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Ամրակցիչի պտտող մոմենտի տվյալների աղյուսակ փականի իրանից մինչև շարժաբեր մեխանիզմների համար](#) (Էջ 9):
4. Կատարե՛ք բազմաթիվ խաչաձև անցումներ, մինչև ստանաք պտտող մոմենտի վերջնական աղյուսակային արժեքը: Կատարե՛ք լրացուցիչ խաչաձև անցումներ՝ օգտագործելով աղյուսակի վերջնական արժեքները, որպեսզի հավասար ձգեք յուրաքանչյուր ամրակումը նշված պտտող մոմենտի արժեքի 5%-ի սահմաններում:
5. Կրկին ձգե՛ք փակոցի ամրակումներն այնպես, ինչպես նշված է վերևում, հաշվի առնելով միջավայրային պայմանները, երբ համակարգը կատարել է շրջանառության մեկ ցիկլ աշխատանքային ճնշումը և ջերմաստիճանը ձեռք բերելուց հետո:
6. Հետևե՛ք, որ փականը արտահոսք չունենա.

Եթե արտահոսքը ...	ապա ...
իրանի/փակոցի կցաշուրթի հերմետիկ հատվածում է,	հանե՛ք համակարգի ճնշումը և կրկին ձգե՛ք փակոցի ամրակումները, ինչպես նշված է վերևում:
շարունակվում է,	հանե՛ք համակարգի ճնշումը և կրկին ձգե՛ք փակոցի ամրակումները, ինչպես նշված է վերևում: (առավելագույնը 3-րդ կրկնակի պտտումն է)
շարունակվում է,	Փոխե՛ք փականի դիաֆրագման:

Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Փականի դիաֆրագմայի փոխարկում](#) (Էջ 15):

Ամրակցիչի պտտող մոմենտի տվյալների աղյուսակ փականի իրանից մինչև շարժաբեր մեխանիզմների համար

Աղյուսակ 1. PAS փակոց (963)

Տրված արժեքները նախատեսված են քայլուղով մշակված ամրակցիչների համար:

Փականի չափս, դյույմ (անվանական տրամագիծ)		Դիաֆրագմա պոլիտետրաֆլորեթիլենից		Դիաֆրագմա ճկուն պոլիմերից	
դյույմային ձևաչափ	անվանական տրամագիծ	դյույմ-ֆունտ	Ն-մ	դյույմ-ֆունտ	Ն-մ
0.50	15	20-50	2.3-5.7	20-40	2.3-4.5
0.75	20	40-70	4.5-7.9	20-50	2.3-5.7
1.00	25	45-80	5.1-9.1	25-70	2.8-7.9
1.50	40	145-170	16-19	75-130	8.5-14.7
2.00	50	225-275	25-31	100-180	11-20
2.50	65	500-830	57-94	300-420	34-48
3.00	80	500-830	57-94	300-420	34-48
4.00	100	200-575	23-65	180-220	20-25

Աղյուսակ 2. Մետաղական փակոց (903, 913)

Տրված արժեքները նախատեսված են քայլուղով մշակված ամրակցիչների համար:


Փականի չափս		Դիաֆրագմա պոլիտետրաֆլորեթիլենից		Դիաֆրագմա ճկուն պոլիմերից	
դյույմային ձևաչափ	անվանական տրամագիծ	դյույմ-ֆունտ	Ն-մ	դյույմ-ֆունտ	Ն-մ
0.50	15	25-80	2.8-9.1	20-40	2.3-4.5
0.75	20	50-80	5.7-9.1	20-50	2.3-5.7
1.00	25	65-120	7.4-13.6	45-70	5.1-7.9
1.25 և 1.50	32 և 40	200-225	23-25	75-130	8.5-14.7
2.00	50	225-300	25-34	100-180	11-20
2.50	65	750-1000	85-113	300-420	34-48
3.00	80	750-1000	85-113	300-420	34-48
4.00	100	540-600	61-68	190-230	22-26

ԾԱՆՈՒՑՈՒՄ.

1. Կատարե՛ք բազմաթիվ խաչաձև անցումներ, մինչև ստանաք պտտող մոմենտի վերջնական աղյուսակային արժեքները: Կատարե՛ք լրացուցիչ խաչաձև անցումներ՝ օգտագործելով աղյուսակի արժեքները, որպեսզի հավասար ձգեք յուրաքանչյուր բոլոր նշված պտտող մոմենտի արժեքի 5%-ի սահմաններում:
2. Տրված արժեքները նախատեսված են քսայուղով մշակված ամրակցիչների համար:
3. Նշված նվազագույն արժեքները կապահովեն դիաֆրագմայի ցիկլային կյանքի ավելի երկար տևողություն ավտոկլավում չմշակված և ցածր ջերմային ցիկլի պայմաններում աշխատող փականների համար:
4. Նշված նվազագույն արժեքները կպահանջվեն ավտոկլավային պայմանների և բարձր ջերմային ցիկլի պայմանների համար:
5. Պտտող մոմենտները չպետք է կիրառվեն 38°C | 100°F միջավայրային ջերմաստիճանում կամ դրանց մոտ ջերմաստիճաններում:

Սահմանել վերհանման սահմանափակիչ

1. Դուք ունե՛ք փորձարկային հարմարանք:
 - Եթե այո. հետևե՛ք բայլ 2-ից մինչև բայլ 6-ին:
 - Եթե ոչ. անցե՛ք բայլ 7-ին:



1. Սահմանափակիչ մանեկ
2. Օդի մատակարարում
3. Խողովակների անցկացում
4. Ջրի անոթ
2. Փականի մի կողմին մատակարարե՛ք համակարգի ճնշմանը հավասար օդի ճնշում:
3. Փակե՛ք փականի մյուս կողմը և տեղադրե՛ք ռետինե օդահան կափույր կամ պլաստիկ խողովակ:
4. Խողովակը պահե՛ք ջրով լի տարայի մեջ:
5. Պտտելով փակե՛ք պտտանիվը մինչև արտահոսքը դադարի: Օդի պղպջակները ցույց են տալիս, որ կա արտահոսք:
6. Վերհանման սահմանափակիչ մանեկը կարգավորե՛ք բնիկի օդակի նկատմամբ:
7. Եթե Դուք չունե՛ք սեղմակային հարմարանք, անցե՛ք ստորև նշված բայլերով.
 - a) Թուլացրե՛ք սևեռամանեկը:

- b) Պտտանիվը պտտացրե՛ք ժամացույցի սլաքի ուղղությամբ այնքան, մինչև զգաք դիաֆրագմայի նստելու սկզբնական դիմադրությունը: Այս կետից սկսած՝ պտտանիվը պտտեցրե՛ք ևս 5/8 պտույտ:
- c) Սևեռամանեկը ներպտուտակե՛ք այնքան, մինչև այն նստի բնիկի օղակին:

Աշխատանքային գործառույթներ

Փականի իրանից մինչև շարժաբերը տեղադրված մեխանիզմների շահագործում




ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

Հերմետիկ փակոցի դեպքում փակոցի ինտերվալները և հերմետիկները պետք է պատրաստված լինեն այնպիսի նյութից, որը դիմացկուն է արտահոսող հեղուկի կամ գազի նկատմամբ: Կասկածելու դեպքում ճիշտ գնահատման համար կապվե՛ք ITT ընկերության հետ:

Փականը փակված է պտտանվի ժամացույցի սլաքի ուղղությամբ կատարված պտույտներով:

Փականի չափս		Առանցքածողի տեղաշարժ		Պտույտների քանակ
դյույմային ձևաչափ	անվանական տրամագիծ	դյույմային ձևաչափ	մմ	
0.50	15	0.25	6.4	2
0.75	20	0.38	9.5	3
1.00	25	0.50	13	4
1.25 և 1.50	32 և 40	0.81	21	4.88
2.00	50	1.12	29	6.75
2.50	65	1.61	41	8.12
3.00	80	1.61	41	8.12
4.00	100	2.12	54	10.62

Բացման կարգավորվող սահմանափակչի շահագործում



Անվանում	Նկարագրություն
1	Փակոցի հավաքվածք
2	Պտտանիվ
3	Թասակ
4	Սևեռամանեկ
5	Թասակի պտուտակ

1. Փակոցի հավաքվածքը պետք է տեղադրվի իրանի վրա:

2. Թուլացրեք սևեռամանեկը և պտտեք այն ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ այնքան, մինչև այն գա թասակի պտուտակին մոտ:
3. Թասակի պտուտակը պտտեք հետ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ այնքան, մինչև ներքևի ծայրը հասնի թասակի տակին:
4. Պտտանիվը պտտեցրեք այնքան, մինչև այն գա ցանկալի բաց դիրքին:
5. Թասակի պտուտակը պտտեցրեք ժամացույցի սլաքի ուղղությամբ այնքան, մինչև պտուտակի ներքևի ծայրը հպվի փակոցի հավաքվածքի առանցքաձողի վերնամասին:
6. Սևեռամանեկը մինչև ձգվելը պտտեք ժամացույցի սլաքի ուղղությամբ թասակի վերնամասի նկատմամբ:
Այժմ բացման սահմանափակիչը սահմանված է:

Տեխնապասարկում

Նախազգուշական ցուցումներ



ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

- Բոլոր գործողությունները պետք է իրականացվեն փորձառու անձնակազմի կողմից:
- Եթե աշխատանքային հեղուկը վտանգավոր է ջերմային տեսանկյունից (տաք է կամ սառը) կամ քայքայիչ է, ձեռնարկեք լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումներ: Գործածե՛ք անվտանգության համապատասխան միջոցներ և եղե՛ք պատրաստ աշխատանքային նյութի արտահոսքը կառավարելու համար:
- Մշտապես կրե՛ք պաշտպանիչ հագուստ և միջոցներ աչքերը, երեսը, ձեռքերը, մաշկը և թոքերը համակարգի հեղուկից պաշտպանելու համար:

Ստուգում

Ստուգման հատված	Ինչ ստուգել	Գործողություն խնդիր հայտնաբերելու դեպքում
Փականի արտաքին մասեր	Գերմաշվածություն կամ կոռոզիա	<ul style="list-style-type: none"> • Փոխարինե՛ք վասված մասերը • Դիմե՛ք ITT ընկերությանը փոխարինող մասեր ձեռք բերելու կամ հատուկ ցուցումներ ստանալու համար
Ոչ հերմետիկ փակոց	Ջեղուկի արտահոսք դրենաժային անցքից	Փականի դիաֆրագմայի փոխարինում
Ջերմետիկ փակոց	Ջեղուկի արտահոսք խցափակիչից Ստուգելու համար թուլացրե՛ք v-աձև ակոսի խցափակիչը 2-3 պտույտով	Փականի դիաֆրագմայի փոխարինում
Փականի իրանից միջև շարժաբեր տեղադրված մեխանիզմներ	Սռնակի լուվելը, ավելորդ աղմուկ կամ քսայուղի չորացում	Քսայուղով պատե՛ք վերնամասային սարքավորումները
Դիաֆրագմա և փականի իրան	Արտահոսք դիաֆրագմայի և փականի իրանի միջև	Փակոցի ամրակումների ձգում

Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս.

- [Փականի դիաֆրագմայի փոխարինում](#) (Էջ 15)
- [Պահանջներ քսայուղման համար](#) (Էջ 14)
- [Փակոցի ամրակումների ձգում](#) (Էջ 8)

Պահանջներ քսայուղման համար

Քսայուղման գրաֆիկ

Կրկին քսայուղելուց առաջ մաքրե՛ք հին քսայուղի մնացորդները: Քսայուղով պատե՛ք սռնակի պարուրակները, առանցքակալի կրիչը, ստորին սռնակի դիմային մասն ու վզիկն այնտեղ, որտեղ այն հպվում է ճնշակին, և օ-աձև օղակը, երբ փականի իրանից միջև շարժաբեր տեղադրված մեխանիզմները կազմատված են: Փակոցները չունեն քսայուղման համար անհրաժեշտ անցքեր, դրանք քսայուղով պատելու համար անհրաժեշտ է կազմատել:

Ընդունելի քսայուղեր

Բրենդ	Քսայուղի տեսակ
Chevron	FM ALC EP 2 (համապատասխանում է FDA-ի պահանջներին)
Fuchs	Cassida FM CSC EP2 (համապատասխանում է FDA-ի պահանջներին)

Փականի կազմատում

1. Հանե՛ք խողովակում եղած ամբողջ ճնշումը:
2. Պտտե՛ք փականը դեպի բաց դիրքը առնվազն մեկ պտույտ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
3. Հեռացրե՛ք փակոցի ամրակումները:
4. Փականի իրանից բարձրացրե՛ք վերնամասի սարքավորումները:

Փականի դիաֆրագմայի փոխարինում

1. Կազմատե՛ք փականը:
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Փականի կազմատում](#) (էջ 15):
2. Պտուտակելով հանե՛ք դիաֆրագման ճնշակից՝ պտտելով դիաֆրագման ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ:
Փոխարինվող դիաֆրագման պետք է ունենա գործարանային դիաֆրագմայի նույն չափսը և նույն կարգը:
3. Պոլիտետրաֆլորէթիլենային դիաֆրագման փոխելիս՝ հետևե՛ք այս քայլերին:
 - a) Տեղադրե՛ք ճկուն պոլիմերից նոր հենաբարձիկ խողովակի սևեռամանեկի վերևում:



- b) Շրջե՛ք պոլիտետրաֆլորէթիլենային դիաֆրագման, բթամատով սեղմելով դիաֆրագմայի երեսի կենտրոնին և մատներով պահելով դիաֆրագմայի եզրերը:



- c) Դիաֆրագմայի պարուրակները մտցրե՛ք խողովակի մանեկի մեջ՝ պտտելով ժամացույցի սլաքի ուղղությամբ:



- d) Շարունակե՛ք պոլիտետրաֆլորէթիլէնային դիաֆրագման ժամացույցի սլաքի ուղղությամբ ճնշակի մեջ պտտելը՝ պահելով հենաբարձիկը, որպեսզի այն չպտտվի:



4. Պտտե՛ք դրաֆրագման մինչև վերջ կամ մինչև ուժեղ դիմադրության հանդիպելը այնպես, որ լրացուցիչ ուժով էականորեն չկարողանաք պտտել դիաֆրագման ճնշակի մեջ:



5. Պոլիտետրաֆլորէթիլէնային դիաֆրագման փոխարինելու ժամանակ կրկին շրջե՛ք դիաֆրագման:



6. Պտտե՛ք հետ այնքան (առավելագույնը կես պտույտ), մինչև դիաֆրագմայի բոլտերի անցքերը համընկնեն փակոցի կցաշուրթին:



7. Պտտանիվը պտտեցրե՛ք ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ, ընդամենը այնքան, որ դիաֆրագմայի կցաշուրթի հատվածը հարթ նստի փակոցի կցաշուրթի հատվածի նկատմամբ:
8. Փոխարինե՛ք փակակի իրանի վերին մասի սարքավորումները և ձգե՛ք փակոցի ամրակումները:
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս *Փակոցի ամրակումների ձգում* (էջ 8):
9. Տեղադրե՛ք վերհանման սահմանափակիչը:
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս *Սահմանել վերհանման սահմանափակիչ* (էջ 10):

Դիաֆրագմայի տեսակի փոփոխում

1. Հեռացրեք փակոցի սևեռամանեկները և բարձրացնելով հանեք փակոցը:
2. Հեռացրեք պլաստիկ թասակը և վերհանման սահմանափակիչի սևեռամանեկը:
3. Թուլացրեք պտտանիվի սեղմիչ պտուտակ(ներ)ը և առանձնացրեք պտտանիվը փակոցից:
4. Հանեք դիաֆրագման, սռնակը և հավաքվածքի ֆիքսատորը՝ դուրս քաշելով այն փակոցի ներքևի մասով:
5. Հանեք ճնշակը:

Եթե ճնշակի և սռնակի միակցումն իրականացված է ...	ապա ...
զսպանակի ծայրակալով,	դուրս քաշեք զսպանակի ծայրակալը, որը պահում է ճնշակին
«T» տեսակի միակցումով,	ճնշակը սահեցնելով հանեք սռնակից

6. Տեղադրեք նոր ճնշակ:


Եթե Դուք փոխում եք ...	ապա ...
ճնշակի պոլիմերից դիաֆրագման պոլիտետրաֆլյուորէթիլենից դիաֆրագմայի,	Նոր ճնշակի վեցանկյուն անցքում տեղադրեք խողովակային սևեռամանեկ
պոլիտետրաֆլյուորէթիլենից դիաֆրագման ճնշակի պոլիմերից դիաֆրագմայի,	տեղադրեք նոր ճնշակ:

7. Տեղադրեք նոր ճնշակ:

Եթե ճնշակի և սռնակի միակցումն իրականացված է ...	ապա ...
զսպանակի ծայրակալով,	Նոր ճնշակը տեղադրեք սռնակի վրա և ներտեղադրեք զսպանակի ծայրակալը
«T» տեսակի միակցումով,	ճնշակը սահեցնելով տեղադրեք սռնակի վրա

O-աձև օղակների փոխարինում

1. Փակակի իրանից մինչև շարժաբերը տեղադրված մեխանիզմների փոխարինում.
 - a) Հեռացրեք փակոցի սևեռամանեկները և բարձրացնելով հանեք փակոցը:
 - b) Հեռացրեք պլաստիկ թասակը և վերհանման սահմանափակիչի սևեռամանեկը:
 - c) Թուլացրեք պտտանիվի սեղմիչ պտուտակները և առանձնացրեք պտտանիվը փակոցից:
 - d) Հանեք դիաֆրագման, սռնակը և հավաքվածքի ֆիքսատորը՝ դուրս քաշելով այն փակոցի ներքևի մասով:
2. Հեռացրեք թիվ 1 o-աձև օղակը միջադիրի արտաքին տրամագծի անցքից:



Նկար 5. Օ-աձև օղակներ 0.50–2.00 դյույմ (DN 15–50) փականի համար

- 1. Օ-աձև օղակ 1
- 2. Օ-աձև օղակ 2
- 3. Օ-աձև օղակ 3

Նկար 6. Օ-աձև օղակներ 2.50–4.00 դյույմ (DN 65–100) փականի համար

- 1. Օ-աձև օղակ 1
- 2. Օ-աձև օղակ 2
- 3. Օ-աձև օղակ 3
- 4. Օ-աձև օղակ 4

- 3. Պտտանիվի միջադիրից պտուտակելով հանեք դիաֆրագման և սռնակի հավաքվածքը:
- 4. Հեռացրեք օ-աձև օղակները.

Փականի չափս (դյույմ)	Փականի չափս (DN)	Գործողություն
.5–2	15-50	Հեռացրեք թիվ 2 օ-աձև օղակը սռնակի արտաքին տրամագծի անցքից:
2.5-6	80-150	Հեռացրեք թիվ 2 և թիվ 4 օ-աձև օղակները սռնակի խցափակիչից:

- 5. Տեղադրեք առանցքակալի կրիչը կամ տափօղակը.
 - a) Քսայուղով պատեք առանցքակալի կրիչը կամ տափօղակը: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Պահանջներ քսայուղման համար](#) (Էջ 14):
 - b) Միջադիրի վերնամասում տեղադրեք առանցքակալի կրիչը կամ տափօղակը:
- 6. Առանցքածողի պարուրակները պատեք մեկուսիչ ժապավենով օ-աձև օղակները տեղադրման ժամանակ պաշտպանելու համար:
- 7. Քսայուղով պատեք օ-աձև օղակները: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Պահանջներ քսայուղման համար](#) (Էջ 14):

Փականի չափս (դյույմ)	Փականի չափս (DN)	Գործողություն
.5–2	15-50	Քսայուղով պատեք թիվ 1 և թիվ 2 օ-աձև օղակները և դրանք տեղադրեք միջադիրի ու սռնակի անցքերում:
2.5-6	80-150	Քսայուղով պատեք թիվ 2 և թիվ 4 օ-աձև օղակները և դրանք տեղադրեք միջադիրի ու սռնակի խցափակիչի անցքերում:

Ընտրեք փականի չափսին համապատասխան օ-աձև օղակներ:

Փականի չափս, դյույմ (անվանական տրամագիծ)	Օ-աձև օղակ 1	Օ-աձև օղակ 2	Օ-աձև օղակ 4
0.50 (15)	.445 x .063	#107	–
0.75 (20)	.571 x .063	#109	–
1.00 (25)	.634 x .063	#110	–
1.25 (32)	#119	#112	–
1.50 (40)	#119	#112	–
2.00 (50)	#119	#112	–
2.50 (65)	#218	#209	#212
3.00 (80)	#218	#209	#212
4.00 (100)	#220	#210	#214


8. Հեռացրեք մեկուսիչ ժապավենը առանցքաձողի պարուրակներից:
9. Միջադիրի մեջ պտուտակեք դիաֆրագման և սռնակի հավաքվածքը:
10. Տեղադրեք դիաֆրագման, սռնակը և միջադիրի հավաքվածքը փակոցի մեջ:
Ստուգեք, որ կարգավորիչ տափօղակը տեղադրված լինի:
11. Պտտանիվի տեղադրում.
 - a) Ձգեք սեղմիչ պտուտակները այնպես, որ սեղմիչ պտուտակի ծայրերը հագնեն միջադիրի անցքերին:
 - b) Եթե Ձեր պտտանիվը պլաստիկից չէ, ապա պարուրակի հերմետիկ:
12. Տեղադրեք թիվ 3 օ-աձև օղակը և ամուր ձգելով պտուտակեք թասակը միջադիրի վրա:
Ընտրեք փականի չափսին համապատասխան օ-աձև օղակ:

Փականի չափս, դյույմ (անվանական տրամագիծ)	Օ-աձև օղակ 3
0.50 (15)	#118
0.75 (20)	#119
1.00 (25)	#121
1.25 (32)	#122
1.50 (40)	#122
2.00 (50)	#122
2.50 (65)	#128
3.00 (80)	#128
4.00 (100)	#130


Մատերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր

963 PAS պլաստիկ փակոց

Մատերի ցանկ



Նկար 7.



Անվանում	Նկարագրություն	Նյութ	Քանակ
1	Սռնակ	չժանգոտվող պողպատից (0.5–2 դյույմ (DN15–50) թերթավոր պողպատից (3–4 դյույմ (DN80–100) ¹	1
2	Սևեռապնդիչ մանեկ	չժանգոտվող պողպատից	4
3	Տափօղակ	չժանգոտվող պողպատից	1
4	Մանժետային տիպի կիպարար	վիտոնից Պոլիօլեֆինային փրփուր	1
5	Օ-աձև օղակ	վիտոնից	1
6	Պտուտակ	չժանգոտվող պողպատից	1 կամ 2
7	Օ-աձև օղակ	վիտոնից	1
8	Օ-աձև օղակ	վիտոնից	1
9	Առանցքակալի կրիչ	պոլիէթիլենից	Ինչպես պահանջվում է
10	Կարգավորիչ	արույրից	1
11 ²	Ճնշակ	բրոնզից կամ չժանգոտվող պողպատից	1
12 ³	Չսպանակավոր կոճգամ	սիլիկոնից	1
13	Խողովակի սևեռամանեկ	արույրից	1
14	Յենաբարձիկ	EPDM	1
15	Դիաֆրագմա	Պոլիտետրաֆլյորէթիլեն	1
16	Մետաղական իրան	չժանգոտվող պողպատից	1
17	Թասակի մանեկ	չժանգոտվող պողպատից	4
18	Յարթ տափօղակ	չժանգոտվող պողպատից	4
19	Փակոց	պոլիարիլսուլֆոնից	1
20	Վեցանկյուն սևեռամանեկ	չժանգոտվող պողպատից	4
21	Սևեռամանեկի կափարիչի թասակ	պոլիարիլսուլֆոնից	4
22	Կարգավորիչ տափօղակ	պոլիէթիլենից	Ինչպես պահանջվում է
23	Պտտանիվ	պոլիարիլսուլֆոնից	1
24	Թասակ	պոլիֆոնիլսուլֆոնից	1
25	Մեխ	չժանգոտվող պողպատից	4
26	Բաժանարար	չժանգոտվող պողպատից	4
27	Իրան	չժանգոտվող պողպատից	1
28 ⁴	Վեցանկյուն սևեռամանեկ	չժանգոտվող պողպատից	4
29	V-աձև ակոսիկով խցափակիչ	չժանգոտվող պողպատից	1

¹ 3–4 դյույմ չափսի (DN80–100) ներքին սարքավորումները տարբերակային են:

² Ներքին սարքավորումների մեջ մտնում են չժանգոտվող պողպատից սռնակը և բրոնզե ճնշակը:

³ Սռնակի և ճնշակի միջև գտնվող «T» տեսակի միակցիչ ակոսների համար զսպանակավոր կոճգամ չի օգտագործվում:

⁴ ASME տեսակի ամրակումներն առաջարկվում են ստորին բաթով փականի համար:

Այս փաստաթղթի ամենավերջին տարբերակը
տեսնելու և մանրամասն տեղեկատվության համար
այցելե՛ք մեր կայքէջը.
www.engvalves.com



ENGINEERED FOR LIFE

ITT Engineered Valves
33 Centerville Road
Lancaster, PA 17603
USA

© 2017 ITT Inc. ընկերություն կամ նրա լիարժեք սեփականությունը
հանդիսացող մասնաճյուղեր
Քնտրիկական ցուցումները ներկայացված են անգլերեն լեզվով: Բոլոր ոչ
անգլերեն տարբերակները համարվում են թարգմանություն
քնտրիկակից:

Ձև IOM.HWO.hy-am.2017-11